

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N24.6/[109105]-12

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-ԻՆ
ԺԱՍՆ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին`**

Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Մովսիսյան	ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ա. Նալբանդյան	ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Ղուլարյան	ՀՀ Տավուշի մարզպետ
Ն. Պողոսյան	ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Ս. Սահակյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ս. Բագրատյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ս. Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Հ. Սանասարյան	Կանաչների միության նախագահ
Կ. Դանիելյան	Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի

նախագահ

- Ա. Մարգարյան ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ
- Ա. Գասպարյան ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության փորձագետ
- Լ. Գրիգորյան ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գլխավոր հաշվապահ

1. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2011 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին

(Վ. Մովսիսյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2011 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին:

2. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2011 թվականի ֆինանսական հաշվետվության մասին

(Վ. Մովսիսյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2011 թվականի ֆինանսական հաշվետվությունը:

3. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2012 թվականի հաստիքացուցակի և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվի մասին

(Վ. Մովսիսյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2012 թվականի հաստիքացուցակի և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվը՝ 20238,1 դրամ:

4. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2012 թվականի իրակա-
նացվելիք ծրագրերի և ֆինանսավորման աղբյուրների մասին

(Վ. Մովսիսյան, Վ. Գաբրիելյան, Կ. Դանիելյան, Ս. Կարապետյան, Հ. Սանասարյան,
Ն. Պողոսյան, Ա. Ղուլարյան, Ս. Բազրատյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել՝

ա. <<Երևանի անտառտնտեսության <<Էրեբունու անտառպետության>> 51 հեկտար տարածքի անտառապատման աշխատանքների>> ծրագրի (2-րդ փուլ) շրջանակներում 31 հեկտարի վրա ոռոգման համակարգի ստեղծման և ցանկապատման աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 52.0 մլն. դրամ նախնական արժեքով:

Հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը, թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին <<Երևանի անտառտնտեսության <<Էրեբունու անտառպետության>> 51 հեկտար տարածքի անտառապատման աշխատանքների>> ծրագրի (2-րդ փուլ) շրջանակներում 31 հեկտարի վրա ոռոգման համակարգի ստեղծման և ցանկապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման, ինչպես նաև ոռոգման համակարգի ստեղծման և ցանկապատման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով:

բ. <<Երևանի անտառտնտեսության <<Էրեբունու անտառպետության>> 51 հեկտար տարածքի անտառապատման աշխատանքների>> ծրագրի (2-րդ փուլ) շրջանակներում 31 հեկտարի վրա անտառապատման աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 29.2 մլն դրամ նախնական արժեքով:

Հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը, թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին <<Երևանի անտառտնտեսության <<Էրեբունու անտառպետության>> 51 հեկտար տարածքի անտառապատման աշխատանքների>> ծրագրի (2-րդ փուլ) շրջանակներում 31 հեկտարի վրա անտառապատման աշխատանքների աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման, ինչպես նաև 31

հեկտարի վրա անտառապատման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով.

2) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին, ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին և ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանին` քննարկել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2012 թվականին իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման աղբյուրների հարցը.

3) առաջարկել Կանաչների միության նախագահ Հ. Սանասարյանին նիստում իր կողմից հնչեցված խնդիրները գրավոր ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին լրացուցիչ քննարկելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ